և մուսուլմանական միջնադարյան արվեստի մեջ, ի հարկե ամեն շրջան կրելով և իրեն յատուկ բնորոշ կողմերը։

ԺԳ. դարու հայ արվեստի վերածնության սաղմերն արդեն նկատվում են Ժ—ԺԱ. դարում. կենդանական և բուսական որնամենտացիայի մի ամբողջ աշխարհ և բաց անում մեր առաջ Ախթամարի Ս. Խաչ վանքը, մի կողմից կապված հին, իրանական—սասանյան և միջագետական ավանդների հետ, մյուս կողմից ԺԳ. դարու արվեստի հետ, այսպիսով բանալի հանդիսանալով սորա հասկացողության համար։ Անշուշտ այս հասկացողության քիչ տվյալներ չունին առհասարակ Ժ—ԺԱ. դարու հայ ճարտարապետությունը, զարդագրությունը և մանրանկարչության մնացորդները, միջին ողակը հանդիսանալով ԺԳ. դարու և ավելի հնագույն շրջանների համար, բայց վոչ մի տեղ այնպես ուժեղ և շոշափելի կերպով, ինչպես Աղթամարում, հատկապես կենդանական—բուսական զարդագրության համար։ Այս կողմից վորոշ չափով նպաստում են նաև ուրիշ շենքեր, ինչպես Բարդուղիմեոս առաքյալի վանքը Վասպուրականում, Ցախացքարը Վայոց ձորում, Անիի մայր յեկեղեցին Շիրակում։ Շատ նմանություններ, վոր մենք տեսնում ենք հայ և սելջուկյան արվեստների մեջ, նկատվում են արդեն Աղթամարում կամ ԺԱ. դարու մանրանկարչության և քանդակագործության մեջ, վորով և փոխազդեցության լուսաբանության փոխարեն յերկուսի համար ել ընդհանուր հայրենիքը մատնանշվում։ Այդ աղերսը ավելի յեն պարզում Մշո Առաքելոց դրան (այժմ Յերևանի թանգարանում) աջ և ձախ շրջանակների թևավոր, առասպելական կենդանիների շարքերը, ՇՁԳ=1134թվից, վորոնց թվում նաև կորճառյուծն ու պարիկը. իսկ ավելի հին Աղցի գետնափոր գերեզմանի դրան շրջանակազարդն է։

Սակայն յերկու արվեստների փոխազդեցությունն ել անուրանալի յե, վոչ միայն զարդարանքի, այլ և կառուցողական մասերով, տնային կամ կարասիքի և անոթեղենների մեջ։ Սելջուկների արշավանքն ու տիրապետությունը կործանարար եր և վանողական միայն առաջին շրջաններում, բացառությամբ Մելիքշահի ժամանակի, յերբ «առավել խաղաղացաւ աշխարհն ամենայն, մանաւանդ երկիրս հայոց, որ ի նախնի բըռնակալացն ի սպառսպուռ զկործանման բաժակն արբեալ էր յանցեալ ժամանակս» *. Բայց բնականաբար հետզհետե մեղմացան հարաբերությունները այն չափով, վոր նույն իսկ խնամական կապեր եյին հաստատվում



Կոպտական հատակոտոր Թ—Ժ. դարու ? **Պատկեր 70.**

հայ և սելջուկ տեղական իշխանների մեջ։ Մանուչեն մոր կողմից իրեն Բագրատունի եր համարում և բարեկամական հարաբերության մեջ եր Պահլավունիների հետ **. Արցախի իշխաններից Վասակի վորդի Գրիգորը յուր դուստրը կնության եր տվել Ճարաբերդի սելջուկ իշխանին, վորի ոգնությամբ կամենում եր վրեժխնդիր

** Սամուել Անեցի. 118/9։
* Վարդան. 145։ Մատթ. Ուռհայեցի. 269։